

ԶԱՆԳԵԶՈՒՐ 1917 Թ. ԶԱՂԱԶԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՈՒՄՆԵՐՈՒՄ

Ա. Յ. ՄԻՍՈՆՅԱՆ

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, և ցարը տապալվեց: Կազմավորվեց ժամանակավոր իշխանություն իշխան Գ. Լվովի գլխավորությամբ: Իշխանության առանձին մարմին դարձավ նաև բանվորների և զինվորների պատգամավորների Պետրոգրադի խորհուրդը: Այսպիսով երկրում հաստատվեց երկիշխանություն:

Հեղափոխության հաղթանակի լուրը շուտով հասավ ազգային ծայրամասեր: Գնալով բուռն իրադարձություններ էին ծավալվում նաև Անդրկովկասում: Ինչպես ռուսական կայսրության մեջ ամենուր, այստեղ նույնպես պատերազմի և խաղաղության խնդիրները զուգորդվել էին հողի և ազգային ազատության համար մղվող պայքարին: Աննախընթաց բուռն գործունեություն ծավալած քաղաքական կուսակցությունները և հոսանքները¹ աստիճանաբար քաղաքականություն էին ներքաշում բնակչության նորանոր զանգվածների:

Քանի որ Թիֆլիսը կովկասյան փոխարքայության կենտրոնն էր, ուստի քաղաքի դուրսն հանձն առավ դիմել ժամանակավոր կառավարությանը՝ խնդրելով ստեղծել երկրամասի ղեկավարման հատուկ մարմին²:

Նիկոլայ II-ի գահընկեցության լուրն այնքան անակնկալ էր, որ առաջին օրերին Զանգեզուրում ոչ ոք չէր հավատում: Եվ երբ այն հաստատվեց, սկսեցին երկարատև բուռն խրախճանքներ հատկապես Գորիս քաղաքում: Բոլորը սպասում էին իրենց կյանքում հանկարծակի փոփոխությունների: Գավառի միակ բանվորական միջավայրում՝ Կապանի հանքերում, 1917 թ. մարտին ձևավորվեց Զանգեզուրում առաջին բանվորական պատգամավորների խորհուրդը, որի փաստացի նախագահն էր տեղի հեռագրիչ, բոլշևիկ Լևոն Ղազարյանը³:

Նույն գործընթացները տեղի էին ունենում նաև Արցախում, բայց ավելի բուռն ու լայնածավալ: 1917 թ. մարտի կեսերին Շուշիում ստեղծվեցին բանվորների, գյուղացիների ու զինվորների ղեպուտատների առաջին խորհուրդները, որոնք մի քանի ամիս անց միավորվեցին, և կազմվեց բանվորների, գյուղացիների և զինվորների՝ Շուշիի խորհուրդը⁴:

¹ Տե՛ս Յ. Մելիքեան, Արեան ճանապարհով, «Հայրենիք» ամսագիր, 1924 նոյեմբեր, թիվ 1(25), էջ 73, Ա. Գուլյանդանեան, Անդրկովկասը և Բազուի դեպքերը, «Հայրենիք» ամսագիր, 1967 հունվար, թիվ 1, էջ 36-38:

² Տե՛ս Շ. Ե. Շեֆ, Революция 1917 года в Закавказье, Документы, материалы, Тифлис, 1927, էջ 63-64:

³ Տե՛ս «Փայլակ», Շուշի, 1917, 5 ապրիլի, «Մշակ», 1917, 14 մարտի, Ս. Վրացեան, Հայաստանի Հանրապետություն, Թեհրան, 1982, էջ 326-327, «Հին բոլշևիկների հիշողություններ», գիրք երկրորդ, Եր., 1966, էջ 600-603, Վ. Մելիքյան, Փետրվարյան հեղափոխությունը և Հայաստանը (1917 թ. մարտ - հոկտեմբեր), Եր., 1997, էջ 55, Ս. Գ. Սողոմոնյան, Քաղաքացիական կռիվները Զանգեզուրում, Եր., 1958, էջ 7:

⁴ Տե՛ս «Փայլակ», Շուշի, 1917, 9, 12, 16, 19 մարտի, Վ. Մելիքյան, Գլվ. աշխ., էջ 19, 35, 55, Հ. Աբրահամյան, Մարտնչող Արցախը 1917-2000, գիրք Ա, 1917-1923, Եր., 2003, էջ 11-13, Մ. Ս. Սողոմոնյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, «Բանբեր Հայաստանի արխիվներ», 1968, թիվ 1, էջ 113-114:

Մարտի 9-ին ժամանակավոր կառավարությունը որոշում ընդունեց Անդրկովկասյան հատուկ կոմիտե (ՕԶԱԿՈՄ) ստեղծելու մասին, որի մեջ մտան Պետական դումայի հինգ անդամներ՝ Վ. Խարլամովը (նախագահ), կադետներ Մ. Պասպաջանովը, Մ. Զաֆարովը, սոցիալիստ-ֆեդերալիստ Կ. Աբաշիձեն և մենշևիկ Ա. Չխենկելին⁵:

Մարտի 17-ին ՕԶԱԿՈՄ-ը կարգադրություն հրապարակեց, որով Անդրկովկասում ստեղծվում էին գավառային, քաղաքային և գյուղական գործադիր կոմիտեներ, որոնց գլուխ կանգնեցին կոմիսարները: Զանգեզուրում այդ բոլոր մարմիններում ղեկավար դիրք գրավեցին Հ.Յ. դաշնակցության Սյունիքի կոմիտեի կողմից նշանակված մարդիկ և մուսավաթական վերադաս մարմինների կողմից երաշխավորված թուրքեր և քրդեր⁶:

Անդրկովկասյան կոմիտեի հատուկ նպատակը և հիմնական խնդիրները հրապարակվեցին 1917 թ. մարտի 18-ին բնակչությանն ուղղված կոչում: Այնտեղ նշվում էր, որ կոմիտեն կազմավորվել է ժամանակավոր կառավարության կողմից՝ «Անդրկովկասյան երկրամասի հետագա կարգավորման, նաև կովկասյան ռազմաճակատում պատերազմի իրավունքով գրաված մարզերում քաղաքացիական ղեկավարման կազմակերպման նպատակով: ... Համապետական նշանակություն ունեցող հարցերը, այն է՝ ազգային, եկեղեցական, ագրարային, բանվորական, կարող են իրենց վերջնական լուծումը ստանալ միայն Սահմանադիր ժողովում: Պատերազմը պետք է շարունակվի մինչև հաղթական վախճանը»⁷:

ՕԶԱԿՈՄ-ը նաև հայտարարեց, որ «Անդրկովկասը շարունակում է մնալ Ռուսական կայսրության անբաժան մասը»⁸:

Հեղափոխությունից հետո առաջին իսկ շաբաթների իրադարձությունները ցույց տվեցին, որ Անդրկովկասի երեք հիմնական ազգությունների՝ հայերի, վրացիների և կովկասյան թաթարների (հայտնի են նաև կովկասյան թուրքեր, ադրբեջանցիներ, ազերիներ անուններով) տնտեսական և հատկապես քաղաքական ձգտումները ոչ միայն չեն համընկնում, այլև հակոտնյա են⁹:

Դա նկատելի էր երկրամասի բոլոր նահանգներում և գավառներում, այդ թվում Զանգեզուրի գավառում:

Երկրում և Անդրկովկասում տեղի ունեցող քաղաքական ցնցումները, տնտեսական փլուզումը, շարունակվող արյունահեղ պատերազմը իրենց անմիջական անդրադարձն էին ունենում նաև Զանգեզուրի գավառում: Հետզհետե վատթարանում էր ոչ միայն գավառի բնակչության տնտեսական վիճակը, այլև արագորեն լարվում էին ազգամիջյան հարաբերությունները¹⁰:

⁵ Տե՛ս **С. Е. Сеф**, նշվ. աշխ., էջ 78-83, Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 30-31, **Գ. Գալոյան**, Հայաստանը և մեծ տերությունները 1917-1923 թթ., Եր., 1999, էջ 12:

⁶ Տե՛ս **Ա. Աստուածատրեան**, Ատրաբեյճանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք» ամսագիր, 1957, սեպտեմբեր, թիվ 10 (380), էջ 46, Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 31-32:

⁷ Վրաստանի հանրապետության պատմության կենտրոնական պետական արխիվ (այսուհետև՝ ՎՀ ՊԿՊԱ), ֆ. 2080, ց. 1, գ. 845, թ. 1, Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 31-32:

⁸ ՎՀ ՊԿՊԱ, ֆ. 2080, ց. 1, գ. 845, թ. 2, Վ. Մելիքյան, նշվ. աշխ., էջ 31-32:

⁹ Տե՛ս **Ա. Աստուածատրեան**, Ասարայի ոգեկոչումը, «Հայրենիք» ամսագիր, 1931 հուլիս, թիվ 9(105), էջ 106-111, **Ա. Աստուածատրեան**, Ատրաբեյճանը եւ Հայաստանը անկախութեան նախօրէին եւ անկախութեան օրերին, «Հայրենիք» ամսագիր, 1957, օգոստոս, թիվ 8 (378), էջ 44-45 և 1957, սեպտեմբեր, թիվ 10 (380), էջ 42-44:

¹⁰ Տե՛ս **Ա. Մելիք-Ծօլչեան**, Բագուի հերոսամարտը, «Հայրենիք» ամսագիր, 1925, թիվ 12(36), էջ 124, **Ե. Իշխանեան**, Դեպքերը Ղարաբաղում, «Հայրենիք» ամսագիր, 1933 սեպտեմբեր, թիվ 11 (131), էջ 85, **Ա. Աստուածատրեան**, նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, 1957 օգոստոս, թիվ 8(378), էջ 44-45 և 1957, սեպտեմբեր, թիվ 10 (380), էջ 46:

Երկրամասում շերտընդմեջ ապրող հայերը և թուրքերն ունեին խիստ տարբեր քաղաքական ձգտումներ: Իրենց հավատակիցների հետ համերաշխ և հայերի հետ մշտական հակասությունների մեջ էր նաև Զանգեզուրի մեջ մտնող, այդ գավառի և լեռնային Ղարաբաղի արանքում ընկած, հարավից հյուսիս խոր ձորերով ու բարձրաբերձ լեռներով ձգվող նեղ տարածքում (միջնամասում) բնակվող քուրդ բնակչությունը:

Լաչինի շրջանի քուրդ բնակչության մի զգալի մասը, չունենալով ոչ բերրի հողեր, ոչ էլ ձմեռային լավ արոտավայրեր, սովորաբար աշնանը անասունների հետ քոչում էր ցածրադիր Ղարաբաղ: Դեպի հետ՝ Լաչին, քոչերը վերադառնում էին մայիսից ոչ շուտ և բարձրանում Սիսիանի սարերը: Լաչինի և Կուրաթլուի շրջաններում քոչերը աղքատիկ հողակտորների և հողագրկության պայմաններում չէին կարողանում ապահովել տանելի կյանք:

Գյուղատնտեսության բնույթի վրա էլ ավելի մեծ չափով ազդում էր քոչվորական կյանքի ավանդույթը, երբ քուրդն ամբողջ ընտանիքով ու տնտեսությամբ փոխադրվում էր այնտեղ, որտեղ անասունները կեր էին ունենում:

Դա էր քոչերից շատերի նստակյաց չդառնալու և հողագործությամբ չզբաղվելու պատճառը¹¹:

Դեռևս XIX դարում քոչերի մի զգալի մասը Լաչինի և Կուրաթլուի շրջաններում սկսել էր դուրս գալ խշեմներից դեպի դաշտերը, մշակել մրգատու ծառեր, անեցնել շերամ, զբաղվել զանազան արհեստներով: Երկրագործները մշակում էին ցորեն, գարի, կորեկ, բրինձ: Ավելի ցածրադիր վայրերի այգիներում աճում էին ծիրան, դեղձ, տանձ, կեռաս, բալ և այլն¹²:

XIX դարի վերջին միջնամասի տարածքում բնակվում էր քուրդ բնակչության հոծ զանգված: 1905-1906 թթ. Անդրկովկասում թուրք-հայկական ընդհարումների ժամանակ այնտեղ դեռ մնացած հայկական գյուղերի (Մինքենդ, Հարար և այլն) մեծ մասը թուրքերի և քոչերի կողմից ենթարկվեց բազմաթիվ հարձակումների՝ արյունալի հետևանքներով: Հետագա տարիներին այդ տարածքից դուրս մղվեցին հայերի վերջին մնացորդները և շրջանը կոչվեց Քուրդիստան:

1886 թ. սվյալներով, քուրդ բնակչությամբ գյուղերի թիվը 113 էր: Ըստ որում, Զանգեզուրի գավառում դրանք 91-ն էին, մնացած 22-ը գտնվում էին Զիվանջիրի (13), Ջեբրայիլի (8) և Արեշի (1) գավառներում¹³: 1897 թ. սվյալներով, Ելիզավետպոլի նահանգում քոչերի թիվը 3042 էր. սակայն սրանք միայն այն քոչերն են, որոնք դեռևս խոսում էին իրենց մայրենի լեզվով¹⁴: Քրդական բնակչության մեծ մասն այստեղ վաղուց արդեն խոսում էր աղավաղված թուրք-ադրբեջաներեն լեզվով: Ինչ խոսք, հետագա 20 տարիներին քոչերի թիվը մեծապես աճել էր, եթե նկատի ունենանք, որ քուրդ ընտանիքներում, ինչպես թուրքերի շրջանում, ծնունդը բարձր էր: Սակայն, մյուս կողմից, տեղի էր ունենում քուրդ բնակչության զանգվածային արագ ձուլում մեծամասնությունն կազմող թուրք-ադրբեջանական

¹¹ Տե՛ս Լեոն Սարգսեան, Մի քանի օր Արցախում եւ Սիւնիքում, Թիֆլիզ, 1905, էջ 28-29, Արտ. Արեղեան, Կովկասի ժողովուրդները, «Հայրենիք» ամսագիր, 1924 հոկտեմբեր, թիվ 12, էջ 57, Ս. Ս. Зелинский, Экономический быт государственных крестьян в Закавказском уезде Елисаветпольской губернии. Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края, том IV, Тифлис, 1886, с. 17:

¹² Տե՛ս Н. Г. Гейдаров, В горах Закавказья, Баку, 1968, էջ 6:

¹³ Տե՛ս "Свод статистических данных извлеченных из посемейных списков населения Кавказа. Елисаветпольская губерния", Тифлис, 1888, էջ V, Գ. Առաքելյան, Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը 19-րդ դարում, Եր., 2003, էջ 69:

¹⁴ Տե՛ս "Первая всеобщая перепись населения Российской империи 1897 г.", том LXIII. Елисаветпольская губерния, СПб., 1904, էջ 2-3, 62-63:

բնակչության հետ¹⁵: «Իրենց կեանքի եղանակով, պարապմունքով, ընտանեկան և հասարակական միտ ու կացով, - գրում էր հետազոտողը, - այստեղի (Ջանգեզուրի - Ա. Ս.) քրդերը թաթարներից չեն տարբերում. չկայ տարբերություն մոտ-մոտիկ նրանց դեմքի և հագուստի մէջ»¹⁶:

Միջնատարածքի թուրքաբնակ և քրդաբնակ գյուղերում լիիշխան տերեր էին մուսուլմանական բեգերն ու աղալարները, ամենուրեք տեղաբաշխված էին մուսավաթական զինված ջոկատներ՝ հիմնականում թուրք հրամանատարների գլխավորությամբ:

Մի կողմից՝ թուրք և քուրդ, մյուս կողմից՝ հայ բնակչության միջև հողի և մանավանդ ամառային արոտավայրերի համար ընթացող տևական հակառակությունները ժամանակավոր կառավարության անդրկովկասյան վարչության՝ ՕԶԱԿՈՄ-ի թույլ իշխանության պայմաններում խորանում և փտանգավոր ծավալներ էին ընդունում:

Անիշխանությունը և խառնակչությունները թուրքերի ու քրդերի համար ստեղծել էին հայերի ունեցվածքի թալանի, սպանությունների և առևանգումների բարենպաստ մթնոլորտ¹⁷:

1917 թ. ապրիլ-մայիսից Ջանգեզուրի թուրքական գյուղերում կազմավորված ավազակախմբերը հարձակումներ են գործում հայկական բնակավայրերի վրա: Գողություններն ու անկարգությունները, ճանապարհների հայերի սպանությունները պարբերական բնույթ են կրում¹⁸:

Այդ պայմաններում Ջանգեզուրի հայերին ոչինչ չէր մնում անել, քան դիմել ինքնապաշտպանության, ինչպես 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումների ժամանակ: Քանի որ ժամանակավոր կառավարության՝ Ջանգեզուրի վարչությունն ըստ էության անգործության էր մատնված, ուստի գավառի հայության պաշտպանության հոգսը հիմնականում իր վրա վերցրեց Հ.Յ. դաշնակցության տեղի կոմիտեն:

Հ.Յ.Դ. կոմիտեն բազմիցս դիմում է գավառի հայերին՝ օգտագործել հնարավոր բոլոր միջոցները զենք ձեռք բերելու համար: Նկատի առնելով, որ ոչ բոլոր գյուղացիները հնարավորություն ունեին զենք գնելու, գյուղական կոմիսարների վրա պարտականություն դրվեց՝ ամեն կերպ աջակցել չունկոր գյուղացիներին: Եվ դա պետք է արվեր հնարավորինս շուտ, քանի որ թուրքերը հետզհետե ավելի համարձակ էին դառնում, հայկական գյուղերի վրա հարձակվում էին ամբողջ խմբերով, քշում ու տանում էին հոտերը և նախիրները:

1917 թ. մայիսին, օրինակ, խուժելով Կապանի Ջելվա (Դավիթ Բեկ) գյուղ, թուրքերը սպանում են բնակիչներից մի քանիսին. շատերը փախչում են, իսկ մի մասը ապաստան է գտնում եկեղեցում՝ սպասելով իր վախճանին: Բայց առաջին պահին գյուղի՝ շփոթի մատնված երիտասարդները, ի մի գալով և հարմար դիրքեր գրավելով, սկսում են ուժգին դիմադրել կողոպտիչներին: Միաժամանակ

¹⁵ Տե՛ս Էլիզե Ռեկլի, Ռուսական Հայաստան կամ Արաքսի առաջանը, Ուրմիա լիճ եւ Առաջաւոր Ասիա, Վաղարշապատ, 1890, էջ 57-58, Լեոն Սարգսեան, ճշվ. աշխ., էջ 28-29, Շ. Ս. Зелинский, ճշվ. աշխ., էջ 14:

¹⁶ Տե՛ս Ե. Լալայեան, Ջանգեզուրի գաւառ, միութեւ ապագայ ուսումնասիրութեան համար, Ք. Բ. Ջանգեզուր, Թիֆլիս, 1899, էջ 57:

¹⁷ Տե՛ս Արտ. Արեղեան, ճշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, 1924 սեպտեմբեր, թիվ 11, էջ 128-129, Վ. Միմախորեան, Խորհրդային Հայաստանի անասնապահութիւնը, «Հայրենիք» ամսագիր, 1925 ապրիլ, թիվ 6(30), էջ 72, Արտ. Արեղեան, Մենք եւ մեր հարեւանները, «Հայրենիք» ամսագիր, 1928 օգոստոս, թիվ 10(70), էջ 115, Գ. Անանուն, Ռուսահայերի հասարակական գարգացումը (1870-1900), հատոր երկրորդ, Էջմիածին, 1922, էջ 34:

¹⁸ Տե՛ս «Ջանգ», 1917, թիվ 8, 1 դեկտեմբերի, «Աշխատանքի դրօշակ», 1917, թիվ 15, 15 դեկտեմբերի, Ա. Գուլիսանդանեան, Անդրկովկասը և Բագուի դեպքերը, «Հայրենիք» ամսագիր, 1967 հունվար, թիվ 1, էջ 40:

շտապ սուրհանդակ են ուղարկում Կապանի հանքեր՝ օգնության խնդրանքով: Հանքերում հենց նոր ստեղծված զինված ջոկատը Գերասիմ Աթաջանյանի գլխավորությամբ շտապում է Ջեյվա, փակում գյուղից դուրս եկող ճանապարհները, շրջապատում գյուղում իրենց խժոժությունները շարունակող թուրքերին, որոնք գլխավորությամբ փախչում են՝ թողնելով մեծ թվով սպանվածներ ու թալանը:

Այդ դեպքը մեծ հուզմունք առաջացրեց Կապանի հայության մեջ: Փետրվարյան հեղափոխությունից հետո դա Ջանգեզուրի հայերի դեմ թուրքերի ձեռնարկած առաջին խոշոր ավազակային հարձակումն էր, որը մեկ անգամ ևս ապացուցում է, թե որքան դաժան է կողոպուտի ծարավ թուրքը: Միաժամանակ դա ահազանգ էր առ այն, որ գավառի հայ բնակչությունը իրավունք չունի անհոգ մնալու և պարտավոր է գեներով պաշտպանել իր օջախն ու պատիվը:

Ջեյվայի արյունոտ միջադեպը, բարձրացնելով Կապանի հայերի զգոնությունը, միաժամանակ տեղի թուրք բնակչության մեջ առաջ բերեց ակնհայտ անհանգրստություն: Երկյուղ կրելով հայերի վրեժխնդրությունից՝ Կապանի թուրքական մի քանի գյուղերի բնակիչները, թողնելով իրենց բնակավայրերը, հեռացան Ջանգեզուրի թուրքաբնակ շրջաններ: Հեռանալով, նրանք հրդեհում էին սեփական տները՝ հայերին ջարդարարության մեջ մեղադրելու համար:

Ջեյվայի դեպքը արագացրեց Կապանում, ապա և Ջանգեզուրի հայկական մյուս բնակավայրերում ինքնապաշտպանական խմբերի ստեղծումը: Առաջին ջոկատները ձևավորվեցին Կապանի շրջանում: Խմբերի կազմակերպման համար գյուղերում հրավիրվում էին հավաքներ, որոնց ընթացքում գեներ գործածել իմացող գյուղացիներին բացատրում էին իրենց անելիքները սեփական բնակավայրերի պաշտպանության ժամանակ: Փաստորեն Կապանի ամեն գյուղ հանձնարարություն էր ստացել ունենալու իր զինված ջոկատը՝ մեծ կամ փոքր: 20-40 տարեկան տղամարդիկ ընդգրկվում էին այնպիսի խմբերի մեջ, որոնք ցանկացած պահի կարող էին հասնել նաև հարևան գյուղերը, իսկ 40 տարեկանից բարձր տղամարդիկ պարտականություն ունեին հսկելու միայն իրենց գյուղերը¹⁹:

1917 թ. օգոստոսի 30-ին Թիֆլիսում կազմավորվեց Հասարակական անվտանգության անդրկովկասյան հատուկ կոմիտե, որն էլ Խորհուրդների երկրամասային կենտրոնի աջակցությամբ 1917 թ. նոյեմբերի 14-ին (հոկտեմբերյան հեղափոխությունից հետո) ընդունեց որոշում Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման վերաբերյալ: Նոյեմբերի 15-ին Անդրկովկասյան հատուկ կոմիտեն լուծարվեց: Նորաստեղծ Անդրկովկասյան կոմիսարիատի կազմում ընդգրկվեցին՝ վրաց մեմըշիկներ Ե. Գեգեչկորին, Ա. Չխենկելին, դաշնակցականներ Գ. Տեր-Ղազարյանը, Խ. Կարճիկյանը, Հ. Օհանջանյանը, մուսավաթականներ Մ. Ջաֆարովը, Խ. Մելիք-Ասլանովը, Ֆ. Խան-Խոյսկին, Խ. Խասամեղովը, վրաց սոցիալիստ-ֆեդերալիստ Օ. Ալեքսեև-Մեսխիկը, էսեռներ Դ. Դոնսկոյը, Ա. Ներուչևը: Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահ դարձավ Ե. Գեգեչկորին²⁰:

Անդրկովկասյան կոմիսարիատը հայտարարեց, որ ինքը ժամանակավոր իշխանություն է և «իր առջև նպատակ է դնում բնակչության ամենակենսական պահանջների իրականացումը. կարգավորել ֆինանսական համակարգը, փրկել ժողովրդին և բանակը սովից, բարելավել տրանսպորտի և ճանապարհների վիճակը, ապահովել հասարակական կարգուկանոն, սահմանել վերահսկողություն

¹⁹ Ջեյվա գյուղի դեպքերի և Կապանում ինքնապաշտպանական խմբերի ստեղծման մասին տվյալները քաղել ենք Գերասիմ Աթաջանյանի կենսագրությանը նվիրված՝ նրա որդու ձեռագիր աշխատությունից, որը պահվում է մեր անձնական արխիվում:

²⁰ Տե՛ս «Հորիզոն», 1917, 14 նոյեմբերի. «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», Тифлис, 1919, էջ 4-8, *Эльде*, Закавказье и единая Россия, Ростов на Дону, 1919, էջ 7, Գ. Գալոյան, *Ազգ. աշխ.*, էջ 18, Հ. Ավետիսյան, Հայկական հարցը 1918 թվականին, Եր., 1997, էջ 31:

արտադրության և բաշխման գործում, անհապաղ ստեղծել դեմոկրատական հողային կոմիտեներ, որոնց վարույթին հանձնել ուղեչային, եկեղեցական և ուրիշ մասնավոր խոշոր կալվածքները և, որոնք կմշակեն հողային օրենք Սահմանադիր ժողովի համար: Կոմիսարիատը հայտարարեց նաև, որ կկարգավորի ազգամիջյան հարաբերություններն Անդրկովկասում և անմիջապես զինադադար կստորագրի ռազմաճակատում²¹:

Թեև 1917 թ. մայիսին Ջեյվայի վրա կատարած հարձակումից հետո թուրք-ազերիները ամբողջ մի տարի՝ մինչև 1918 թ. մայիս-հունիսը, չհամարձակվեցին հայկական բնակավայրերի վրա նման զանգվածային զինված հարձակում գործել, բայց շարունակում էին թալանել կամ սպանել պատահական հայ ճամփորդների, առևանգել անասունների հոտեր²²:

Ցարական կառավարությունը Կովկասի թուրք-թաթարներին բանակ չէր գորակոչում: Բանակից ազատվող թուրք տղամարդիկ որոշակի տուրք էին վճարում պետությանը, և, օգտվելով այն բանից, որ զենք բռնելու ընդունակ հայ տղամարդկանց զգալի մասը մարտնչում էր ռազմաճակատներում, բանակային ծառայության չզնայած թուրքերը թիկունքում զբաղվում էին իրենց «տղամարդկային» գործերով՝ ավազակությամբ, թալանով, թաքուն սպանություններով՝ մշտական սարսափի մեջ պահելով Ջանգեզուրի ու Ղարաբաղի հայ գյուղերի խաղաղ բնակիչներին:

Կապանի Օրվենանց գյուղի դպրոցի ավագ ուսուցիչ Գեղեոն Տեր-Մինասյանը, որը շուտով դառնալու էր Ջանգեզուրի ինքնապաշտպանության կազմակերպման նշանավոր գործիչներից մեկը, այդ դպրոցի հիմնադիր-բարերար, նույն գյուղի ծնունդ, Բաքվում բնակվող նավթարդյունաբերող Գասպար Տեր-Մարքարովին 1917 թ. նոյեմբերի 20-ին ուղարկած նամակում գրում էր. «Թանկագին Գասպար Իվանովիչ, սովի պատճառով, ավազակությունները մեր շրջանում ստակալի չափերի են հասել: Օրը ցերեկով քշում, տանում են ապրանքը: Թուրքերը զինված են եռագիծ հրացաններով: Մոսիմը 1500-2000 ուրբով, փամփուշտը 3-5 ուրբով են առնում: Մեր ապուշները վաճառել են բոլոր հրացանները և այսօր անգեն են: Անցյալ օրը ցերեկով մի վերին խոտանանցի են սպանել անտառում, իսկ երեկ մեր գյուղացի (խլաթաղ) մեկի քինայում վիրավորել են երեք տղամարդու և մի կնոջ, քշել տարել են ամբողջ տավարը՝ 16 գլուխ: Ամենուրեք սարսափ է տիրում: Չգիտենք վաղվա օրը ինչպես է լուսանալու: Կամ մեր զինվորները պետք է վերադառնան (ռազմաճակատներից-Ա.Ս.) և պաշտպանեն իրենց հայրենիքը, կամ թե գորք պիտի պահանջել: Հացի խնդիրը դժվարացնում է ամեն բան...»²³:

1917 թ. վերջերին Ջանգեզուրի ընդարձակ գավառը փաստորեն բաժանված էր երկու մասի՝ հայկական և մուսուլմանաբնակ (թուրք-քրդական):

Մուսավաթականները գավառի թուրքական մասը հռչակեցին Գորիսից անկախ և Դոնդարլու գյուղում կազմեցին առանձին ղեկավար մարմին՝ «Մահմեդական կոմիտե» անունով՝ Ջալիլ բեգ Սուլթանովի նախագահությամբ²⁴:

Թուրքական շրջանների հայերը տեղափոխվեցին հայկական վայրերը, իսկ Գորիսից թուրքերը քաշվեցին իրենց ցեղակիցների մոտ: Դրանց հետևեց հայերի պատասխանը. գավառի հայկական մասում ստեղծվեց հայկական վարչություն: Այդպիսով, Ջանգեզուրը պաշտոնապես բաժանվեց երկու իրարից անկախ մասերի²⁵:

²¹ Տե՛ս «Հորիզոն», 1917, 18 նոյեմբերի:

²² Տե՛ս Ա. Գիլիսանդանեան, նշվ. աշխ., էջ 40, Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 327:

²³ ՀԱԱ, ֆ. 378, ց. 1, գ. 26, թթ. 6-7 և շրջերես:

²⁴ Տե՛ս «Լիլիթ», 1981, 2 հուլիսի, Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 327:

²⁵ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 370, ց. 1, գ. 34, թթ. 42-43, Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 327, Գ. Чурсин, Армяне Зангезура, Тифлис, 1931, էջ 229, Ա. Աստուածատրեան, նշվ. աշխ., «Հայրենիք» ամսագիր, 1957, հոկտեմբեր, թիվ 10, էջ 46:

Հայկական մասը, որն անվանվել էր «Զանգեզուր», ընդգրկում էր Գորիս (քուն Զանգեզուր), Սիսիան, Կապան, Արևիք (Մեղրի) հատվածները, իսկ մուսուլմանական մասը՝ գավառի Գորիս-Կապան-Գեմվազ (Մեղրի, Արևիք) գծից արևելք ընկած թուրք և քուրդ բնակչությամբ Զանգեզուրի, Կուրաթուրի և Լաչինի շրջանները: Նույն ժամանակ դադարել էր երթևեկությունը նախկին միասնական գավառի երկու մասերի միջև:

Բաժանված Զանգեզուրի երկու մասերում համապատասխանաբար ստեղծվեցին իշխանության տեղական մարմիններ: Հայկական մասում ստեղծվեց երկու ազգային խորհուրդ՝ գավառի կենտրոն Գորիս քաղաքում և Կապան (Հանքեր) ավանում: Կապանի ազգային խորհուրդն անմիջականորեն ղեկավարում էր այդ շրջանի գործերը, իսկ Գորիսի ազգային խորհուրդը, որը կոչվում էր «Զանգեզուրի կենտրոնական ազգային խորհուրդ», տնօրինում էր գավառի ողջ գործերը: Կենտրոնական խորհրդին ենթակա էր Կապանի ազգային խորհուրդը, Սիսիան և Արևիք (Մեղրի) շրջանները չունեին ազգային խորհուրդներ և ղեկավարվում էին կենտրոնական ազգային խորհրդի կողմից նշանակված շրջանային և ենթաշրջանային լիազորների միջոցով: Նման լիազորներ ունեին նաև Գորիսի և Կապանի շրջանները: Գավառի բոլոր գյուղերը ղեկավարում էին համայնքների կողմից ընտրված և կենտրոնական ազգային խորհրդի կողմից հաստատված գյուղական կոմիսարները²⁶:

Եվ այսպես, 1905-1906 թթ. թուրք-հայկական ընդհարումների կրկնություններից ահաբեկ հայ և մահմեդական բնակչությունը սկսեց տեղափոխվել զինվել:

Հայկական մասի նկատմամբ մուսուլմանական մասն ուներ մի մեծ առավելություն. այնտեղ բնակչությունը կրոնական տեսակետից միատարր էր՝ կազմված էթնիկ թուրքերից ու քրդերից, իսկ հայկական մասում հայ բնակչության թիվն ավելի քան կեսը կազմում էր հայերի համար մեծ վտանգ ներկայացնող թուրք հոծ բնակչությամբ տասնյակ գյուղեր՝ հատկապես Սիսիանի և Կապանի շրջաններում:

Այսպիսին էր Զանգեզուրի բնակչության ընդհանուր պատկերն ազգային ու կրոնական տեսակետից, որը չափազանց աննպաստ էր այդ տարածքում ապրող տարազգի հատվածների խաղաղ գոյակցության համար սրընթաց զարգացող իրադարձությունների պայմաններում: Ինչպես մուսուլման թուրքերն ու քրդերը, այնպես էլ հայերը տագնապահար նախապատրաստվում էին գալիք արյունահեղ կռիվների:

А. Г. СИМОНЯН - *Зангезур в политическом развитии 1917 года.* - После победы Февральской революции в России и образования Временного правительства в политической жизни Закавказья произошли глубокие перемены. По решению Временного правительства был организован Особый Закавказский Комитет (ОЗАКОМ), который взял в свои руки всю полноту исполнительной власти в крае и объявил о том, что Закавказье остается неотъемлемой частью России. События первых недель после Февральской революции показали, что политические и экономические стремления трех Закавказских народов — армян, грузин и

²⁶ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 222, ց. 1, գ. 21, թթ. 10-12, Ս. Վրացեան, նշվ. աշխ., էջ 330, «Համահայկական խորհրդակցություններ (1912-1920թթ.): Փաստաթղթերի և նյութերի ժողովածու», Եր., 2004, էջ 184, Յ. Ստեփանեան, Արցախեան կամ Օուշուայ գնդի պատմությունը, «Հայրենիք» ամսագիր, 1935 մարտ, թիվ 5 (149), էջ 80, Մ. Ս. Սողոմոնյան, Սովետական իշխանության հաստատումը Լեռնային Ղարաբաղում, «Բանբեր Հայաստանի արխիվներին», 1968, թիվ 1, էջ 114:

татар-азербайджанцев не только не совпадают, но и прямо противоположны. Это наглядно проявилось во всех губерниях и уездах края и особенно в Зангезурском уезде, где наряду с продолжающимся ухудшением экономического положения населения резко обострились межнациональные отношения между армянским и мусульманским населением.

Начиная с апреля-мая 1917г. азербайджанские бандитские формирования осуществляли нападения на армянские населенные пункты, грабили и убивали мирное население, в частности, погрому подверглось село Зейва Капанского района, где благодаря мужеству армянских бойцов удалось предотвратить массовую резню жителей села. Эти события ускорили формирование отрядов самообороны в армянских селах Зангезурского уезда.

После Октябрьской революции 1917г. вместо ОЗАКОМа был создан Закавказский комиссариат, которому также не удалось прекратить межнациональную рознь в крае. В конце 1917г. Зангезурский уезд фактически был разделен на армянскую и мусульманскую части со своими органами местного самоуправления. На фоне резкого ухудшения межнациональных отношений и глубокого недоверия друг к другу как армянское, так и мусульманское население уезда лихорадочно вооружалось, готовясь к предстоящим кровавым столкновениям.